Քրիստինե Սարգսյան

ՄԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ՆԿԱՐԻՉ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ ՀԵՃԻՆՅԱՆ

Բանալի բառեր. նկարիչ, արվեստ, մշակույթ, ցեղասպանություն, եկեղեցի, Ֆրիտյոֆ Նանսեն, հայրենիք, Սփյուռք, ԱՄՆ, ռոմանտիզմ, սրբապատկեր:

Հայ արվեստը միշտ վերելք է ապրել աշխարհի չորս ծագերում՝ շնորհիվ իր նշանավոր հայորդիների: Բարձր պահելով «հայ» կոչումը, որն ի ծնե իրենց արյան մեջ է, նրանք աշխարհին ներկայացել են ոչ միայն ցավալի անցյալով, այլև անզուգական տաղանդով, մշտապես ծաղկեցրել են հայ արվեստը, որտեղ էլ որ հանգրվանել են՝ ճանաչելի դարձնելով մեր մշակույթը արտերկրում: Այդպիսին է ցեղասպանությունից մազապուրծ եղած արաբկիրցի Արմենակ Հեճինյանի և այնթափցի Բեատրիս Բարսեղյանի որդին՝ բոստոնաբնակ նկարիչ Դանիել Վարուժան Հեճինյանը (նկ. 1): Կրելով իր մեծ հոր՝ արաբկիրցի հայտնի արծաթագործ վարպետ Դանիելի, ինչպես նաև իր քույրերի թելադրանքով Վարուժան անունը, արվեստագետը ջանք ու եռանդ չի խնայել ծառայելու իրեն ծնած և սնած ժողովրդին: Նահատակ բանաստեղծ Դանիել Վարուժանի անունը կանխորոշել էր նկարչի ուղին՝ դժվար, լի փորձություններով, որը սակայն նա հաղթա-հարեց իր հավատքով, աշխատասիրությամբ, ներքին խաղաղությամբ և տաղանդով: Ծնվելով Հալեպ քաղաքում, ապրելով արաբական միջավայրում՝ Վարուժանը վայելել է ավանդապահ հայ ընտանիքում մեծանալու բերկրանքը: Սովորել է Կիլիկյան վարժարանում, Հալեպի պետական գեղարվեստի դպրոցում, ինչպես նաև Մարտիրոս Սարյանի անվան գեղարվեստի ակադեմիայում: Այն հարցին, թե ինչու՞ նա ընտրեց նկարչի մասնագիտությունը, որը պիտի ուղեկցեր իրեն ողջ կյանքի ընթացքում, այն դեպքում, երբ հայրը դեմ էր, Վարուժանը պատասխանեց. «Մասնագիտությունը ցանկություն չէ, այլ ընտրություն, բայց իմ դեպքում դա ներաշխարհի ինքնալրացում է: Այսինքն ինչպես քո սեռը չես կարող որոշել՝ ծնվել տղա, թե աղջիկ, այդպես էլ կա՛մ նկարիչ ես ծնվում, կա՛մ՝ ոչ: Ու քանի որ դա քո ինքնության հիմնավոր մի մասն է, դա նաև դառնում է բնավորություն: Եվ դու ամեն ինչ անում ես՝ մղված քո ներքինով, քո արվեստով»[1]:

Ապրելով հայրենիքից հեռու՝ այդուհանդերձ, Վարուժանն ապրեցրել է հայրենիքն իր մեջ, կատարելապես տիրապետել է մայրենի լեզվին, ինչը հայի դիմագիծը պահելու կարևորագույն նախադրյալներից է: Դանիել Վարուժան Հեճինյան նկարիչը մեծ համբավ էր վայելում Հալեպում՝ ի շնորհիվ իր հմուտ նկարչական ձիրքի, ինչն էլ նպաստեց 19-ամյա պատանուն 1969 թ. բացել իր անդրանիկ ցուցահանդեսը Հալեպի ազգային պատկերասրահում, որը լայն արձագանք գտավ ժամանակակիցների շրջանում և արժանացավ բարձր գնահատանքի, ինչպես նաև նկարչին շնորհվեց պետական մրցանակ[2]: Ցուցահանդեսին ներկայացված էին սիրիական մշակույթին առնչվող աշխատանքներ, այն երկրի մշակույթի, որտեղ ապաստան էր գտել իր ընտանիքը: Այդուհանդերձ, Վարուժանի հոգում ու սրտում խորհրդածում էր իր հայ լինելու գաղափարը, նա կրում էր իմ մեջ հայի գենը, նրա երակներով հոսում էր հայի արյուն, մի ժողովրդի, որ դարեր շարունակ հաղթահարելով բազմաթիվ փորձություններ և դժվարություններ, կարողացել է վերածնվել և ոտքի կանգնել՝ պահպանելով իր ազգային ինքնությունը: Այդպես եղավ և նրա դեպքում: Արդյունքը երկար սպասեցնել չտվեց: Տակավին երիտասարդ նկարիչը, որն ուներ բոլոր նախադրյալները մեծ հաջողությունների և բարձունքների հասնելու Հալեպում, այնուամենայնիվ, վճռեց մեկնել հայրենիք՝ ստանալու իր մասնագիտական բարձրագույն կրթությունը: Դեռ մանկուց դա էր սերմանվել նրա մեջ, և հայրենիքի կարոտը սրտում՝ 1970 թ. նա եկավ Հայաստան: «Ինձ հայրենիք կան-

[1] Հոդվածում բերված փաստերի և տեղեկությունների հիմնական մասը մենք քաղել ենք արվեստագետի հետ առանձնազրույցից:

[2] Ըստ մեր առանձնազրույցի:

չեցին Սարյանի գույները և Սարգիս Մուրադյանի «Կոմիտաս. Վերջին գիշեր» մեծածավալ աշխատանքը»,- մեր զրույցում ասաց արվեստագետը[1]: Վարուժան արվեստագետին հմայել էին այդ վարպետների խորհրդավորությունը և կատարողական հմտությունը: Հայրենիքում բացվեցին նոր հորիզոններ երիտասարդ նկարչի համար: Կատարվեց նրա բաղձալի երազանքը: Նա ընդունվեց Գեղարվեստաթատերական ինստիտուտ: Վարուժանն այն երջանիկներից էր, ում բախտ վիճակվեց շփվելու 20-րդ դ. հայ արվեստի հսկաների՝ Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի, Սարգիս Մուրադյանի, Գրիգոր Խանջյանի, Արա Բեքարյանի, Բաբկեն Քոլոզյանի, Մինաս Ավետիսյանի, Էդուարդ Իսաբեկյանի, Աշոտ Հովհաննիսյանի (Դեղձ Աշոտ), Վաղինակ Ասլանյանի, Եղիշե Մարտիկյանի, Վահան Հարությունյանի և այլոց հետ: Ի շնորհիվ բնատուր տաղանդի և հմուտ ձեռքի՝ նա վայելում էր դասախոսների սերն ու հարգանքը, ինչն օգնեց նրան նաև ավարտական աշխատանքի թեմայի ընտրության հարցում: Վարուժանը ներկայացրեց հայ հնչակյան գործիչների «20 կախաղաններ» կոչվող նկարը, (նկ. 2) որն անթույլատրելի էր Խորհրդային շրջանում, ուստի կտավը վերանվանեց «Կարմիր լուսաբաց» կամ «Կարմիր արշալույս», և հետագայում նվիրեց այն Հալեպի Հնչակյան կուսակցությանը: Հատկանշական է, որ 2015 թ. նոյեմբերի 7-ին “Evrensel Publishing House”-ը Վարուժանի ստեղծագործությունը օգտագործեց որպես Երվանդ Չոփուրյանի՝ «Փարամազ: Բայա-զետի 20 կախաղանները» թուրքերեն թարգմանված գրքի շապիկ և ներկայացրեց Ստամբուլի գրքի 34-րդ միջազգային ցուցահանդեսում, որը գրքի ամենամեծ տոնավաճառն է Թուրքիայում, իսկ նոյեմբերի 8-ին «Evrensel» հրատարակչության կողմից հատուկ միջոցառման շրջանակներում քննարկվեց գիրքը, ինչպես նաև «Հայոց ցեղասպանությունն իր 100-րդ տարելիցին» թեման[2]:

Հաջողությունն ուրվականի պես շարունակում է հետևել նկարչին, և 1976 թ. նա անհատական ցուցահանդես է ունենում հայրենիքում՝ Սփյուռքի կոմիտեում, որը մեծ գովասանքի է արժանանում ժամանակակիցների կողմից: Սակայն ճակատագիրն ուրիշ ուղի էր կանխորոշել Դանիելի համար: 1979 թ. նա մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ Հայաստանում թողնելով առաջնեկով հղի կնոջը: Ամեն ինչ շատ դժվար էր ու բարդ, նկարչի հոգում խառնաշփոթ էր տիրում: Անցնելով բազմաթիվ փորձությունների միջոցով, հաղթահարելով որոշ խոչընդոտներ՝ ի վերջո Դանիել Վարուժան Հեճինյան նկարիչը կարողանում է իր անսասան և կայուն տեղն ու դիրքը զբաղեցնել Ամերիկայի Միացյալ Նահանգների արվեստի շրջանակներում՝ հաստատվելով Բոստոն քաղաքում: Սկզբում աշխատանքի է ընդունվում “Ackerley Communication” գովազդային ընկերությունում՝ նկարելով հսկայածավալ գովազդային ցուցապաստառներ, այնուհետև “Clear Channel” կազմակերպությունում՝ աշխատելով արվեստի և ստեղծագործական բաժնի տնօրեն, աշխատակցում է նաև «Պայքար» և «The Armenian Mirror-Spectator» հայկական շաբաթաթերթերին՝ ստեղծելով երգիծանկարներ հոդվածների համար: Ապրելով ԱՄՆ-ում՝ նա մշտապես պահում է կապն իր հայրենիքի, նաև տեղի հայ համայնքի հետ: 1993 թ. ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Ոթերթաուն քաղաքի Հայկական գրադարան- թանգարանում տեղի ունեցավ նկարչի ամերիկյան առաջին անհատական ցուցահանդեսը:

2003 թ. Վարուժանը Բոստոնում հիմնեց «Արվեստի խաղաղությունը» (“Peace of Art”) անշահույթ կրթական կազմակերպությունը[3], որն օգտագործում է արվեստի համընդհանուր լեզուն՝ իրազեկելով մարդկային գոյավիճակի մասին, նպաստելով հակամարտությունների խաղաղ լուծմանը՝ առանցք ունենալով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը: 2014 թ. «Արվեստի խաղաղությունը» կազմակերպությունն իր ամենամյա քարոզարշավի շրջանակներում Մասաչուսեթսի տարբեր քաղաքներում բարձրացրեց ստատիկ և էլեկտրոնային վահանակներ «Ճանաչեք դարի ոճիրը՝ Հայոց

[1] Հոդվածում բերված փաստերի և տեղեկությունների հիմնական մասը մենք քաղել ենք արվեստագետի հետ առանձնազրույցից:
[2] Նույնը:
[3] Տե՛ս “Recognizing “Peace of Art, Inc.” and DanielVaroujan Hejinian for his lifelong efforts to promote peace through his works of art”, http://www.peaceofart.org/

ցեղասպանությունը» խորագրով: Միջոցառումները շարունակվեցին նաև 2015 թ.: Կազմակերպությունը Վարուժան Հեճինյանի նախաձեռնությամբ իրականացրեց քարոզարշավ «100 վահանակ Ցեղասպանության 100-րդ տարելիցին» խորագրով ԱՄՆ-ի տարբեր նահանգներում: Կանադայում ևս բարձրացրեց վահանակներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին, ինչպես նաև վերջին հարյուր տարիների ընթացքում տեղի ունեցած բոլոր ցեղասպանությունների անմեղ զոհերի հիշատակին: 1996 թ. սկսած մինչ օրս՝ նկարիչն իր միջոցներով ու ջանքերով ամեն տարի ապրիլի 24-ին ցուցանակներ է բարձրացնում Բոստոնի բանուկ փողոցների վրա՝ ականջալուր դարձնելով մարդկանց հայ ժողովրդի ողբերգությանը (նկ. 3, 4, 5):

Իր կյանքի տարբեր շրջաններում Վարուժանն ունեցել է տարբեր ձգտումներ և երազանքներ, բայց բոլոր շրջաններում ամենանվիրականն իր համար եղել է խաղաղության գաղափարը: Իսկ այսօր, նկարչի խոսքով, իր համար ամենաթանկն աշխարհում հայ զինվորն է, որն իր երիտասարդ կյանքն է ներդնում որպես հայրենիքի խաղաղության պահապան: «Ես միտված եմ իմ արվեստը ծառայեցնելու մարդկային անարդարությունների դեմ պայքարելու և հակամարտությունների խաղաղ լուծման համար»,-ասում է նկարիչը[1]:

Դանիել Վարուժանի արվեստը շատ բարձր է գնահատվում ԱՄՆ-ում, ինչպես նաև դրա սահմաններից դուրս: Նրա ստեղծագործությունները կարող ենք բաժանել շարքերի՝ նվիրված Սիրիայի ժողովրդին, ռոմանտիկ աշխատանքներին[2], եկեղեցական սրբապատկերներին, խաղաղության արվեստին[3], հայրենիքի անկախությանը[4], ԱՄՆ-ին[5] և այլն: Վարուժանի աշխատանքներում առկա են ռոմանտիզմի, էքսպրեսիոնիզմի, ինչպես նաև սյուրռեալիզմի տարրեր: «Ուսանողության շրջանում ուսումնասիրել էի Դալիին և սյուրռեալիզմի գաղափարախոսությունը և տարված էի դրանով, ինչպես նաև կուբիզմով և ռեալիզմով: Ամեն ինչ փորձում էի, որպեսզի հասնեմ ինքնաճանաչման այդ բազմազանության մեջ: Ես ինձ սյուրռեալիստ նկարիչ չեմ համարում, չնայած իմ արվեստը կառուցում եմ կոտրված ֆասադների, շարունակական ազատ գծերի, կլորների, եռանկյունների միջոցով պատկերվող հակասությունների վրա: Որքան որ նրանք հեռու են արտաքին իրականությունից, նույնքան մոտ են իմ ներքին աշխարհին: Ասելով այս ամենը, ինձ համարում եմ երազանքների ջուլհակ»,-ասել է նկարիչը[6]: Նրան հոգեհարազատ են էժեն Դելակրուայի, Սալվադոր Դալիի, Պոլ Սեզանի և Պաբլո Պիկասոյի արվեստը, որի հետ մեկտեղ Վարուժան Հեճինյանը ստեղծել է իր սեփական ինքնատիպ արվեստի լեզուն և տարբերվող ձեռագիրը: Նրա նկարչությունը հիմնված է գունային հակադրությունների՝ տաք, ինչպես նաև սառը գույների ճշգրիտ համադրություն վրա: Ամեն նկարի հիմքում ընկած է Վարուժան արվեստագետի տարիների վաստակն ու փորձառությունը, որին էլ գումարվում է այն երեք, չորս կամ հինգ ժամը, որպեսզի կտավը հասնի իր ավարտուն տեսքին: Այդ ժամանակը նրա ողջ կյանքի կենսափորձն է: Իր մուսան ինքնաբերաբար մղում է նրան նկարչական տրամադրության: Ցանկացած նկար ստեղծելիս Վարուժանը նախապես ոչինչ չի որոշում հորինվածքի վերաբերյալ, այլ ուղղակի մոտենում է կտավին, վրձինով կամ մատիտով գծեր անում և սկսում տեսնել ու նկարել սյուժեն՝ հետաքրքրությամբ սպասելով վերջնական արդյունքին: Յուրաքանչյուր նոր նկար նա համարում է նոր ծնունդ: Աշխատանքները հիմնականում ստորագրում է «Varoujan», երբեմն նաև «Դ. Վարուժան»:

Գեղանկարչական և գծանկարչական աշխատանքներից զատ, ապրուստի միջոց ունենալու համար Դանիել Վարուժան Հեճինյանը ստեղծել է նաև հրաշալի որմնանկար-

---

[1] Հոդվածում բերված փաստերի և տեղեկությունների հիմնական մասը մենք քաղել ենք արվեստագետի հետ առանձնազրույցից:

[2] Տե՛ս “Romantic paintings collection”, http://www.varoujan.net/paintings_collection.html

[3] Տե՛ս “Peace of Art collection”, http://www.varoujan.net/peace-of-art_Collection.html

[4] Տե՛ս “Flight to Independence”, http://www.varoujan.net/Independence_collection.html

[5] Տե՛ս “Colors of Liberty collection”, http://www.varoujan.net/COL_collection.html

[6] Հոդվածում բերված փաստերի և տեղեկությունների հիմնական մասը մենք քաղել ենք արվեստագետի հետ առանձնազրույցից:

ներ Բոստոնի բազմահարկ շենքերի ֆասադների վրա՝ դրանցով լրացնելով քաղաքի մշակութային առօրյան: Արվեստում կարևորվում է Վարուժանի՝ կրոնական թեմաներով աշխատանքները: Նրա ստեղծած որմնանկարները և սրբապատկերները զարդարում են ԱՄՆ-ի 7 հայկական եկեղեցիներ (Չելմսֆորդ Մասաչուսեթսի Սբ. Վարդանանց, Նյու Յորքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Հայ, Նյու Ջերսիի Սբ. Ստեփանոս, Կոննեկտիկուտի Սբ. Համբարձման, Գրինֆիլդի Սբ. Հովհաննես Մկրտիչ, Վուսթեր Մասաչուսեթսի Մեր Փրկիչը Հայ առաքելական եկեղեցիները և Բելմոնտ Մասաչուսեթսի Սբ. Խաչ Հայ կաթոլիկ եկեղեցին): Նրա վրձնին են պատկանում Տիրամայրը Մանկան հետ, Սբ. Գրիգոր Նարեկացու, Սբ. Հռիփսիմեի, Սբ. Ստեփանոսի, Սբ. Ներսես Շնորհալու, Սբ. Գրիգոր Լուսավորչի, Տրդատ թագավորի, Մեսրոպ Մաշտոցի, սպարապետ Վարդան Մամիկոնյանի, Քրիստոս Ամենակալի, առաքյալների, ավետարանիչների, սրբերի պատկերներ, Մուտք Երուսաղեմ, Խորհրդավոր ընթրիք, Խաչելություն, Պայծառակերպություն, Հոգեգալուստ տեսարանները և այլն[1] (նկ. 6-9):

Ինչպես արդեն նշվել էր, Վարուժան նկարիչը հայտնի է ԱՄՆ-ում և դրա սահմաններից դուրս: Նա բազմաթիվ ցուցահանդեսներ է ունեցել հայտնի թանգարաններում և հեղինակավոր ցուցասրահներում: Սակայն Վարուժան Հեճինյանի ամենանվիրական երազանքներից մեկն էր կրկին վերադառնալը և ցուցադրվելը մայր հողում: 2014 թ. սեպտեմբերի 18-ին վերջապես կատարվում է նկարչի բաղձալի ցանկությունը և Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ Հայաստանի ազգային պատկերասրահում բացվում է «Խաղաղության արվեստ» խորագիրը կրող ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանի անկախության 23-րդ տարեդարձին և ցեղասպանության 100-րդ տարելիցին[2]: Այս ցուցահանդեսում ներկայացված էին 61 գեղանկարչական և գծանկարչական աշխատանքներ, որոնցից են՝ «Մարդկության խաչելությունը», «Թղթյա աղավնի», «Տեսիր ոչ չարիք, լսիր ոչ չարիք», «Ընտանիք», «Արգելված պտուղը», «Խաղաղության մունետիկը», «Խաղաղության հրեշտակը» (նկ. 10) «Խաղաղության արվեստի» շարքից, «Անկախության քամին» (նկ. 11), «Մեկ հայրենիք, երկու հանրապետություն» (նկ. 12), «Հայաստան-Սփյուռք-Արցախ» (նկ. 13), «Կապույտ վարդերի մեղեդին» (նկ. 14), «Սիրո կերոն» (նկ. 15) և այլն: Առավել ազդեցիկ են «Դարի ոճիրը» (նկ. 16) և «Ցեղասպանությունից անկախություն» (նկ. 17) եռանկարները: Վերջինիս բնորդուհին Հայաստանում ծնված նկարչի դուստրն է՝ Բեատրիսը, ով նույնպես ստեղծագործում է՝ ժառանգելով իր տաղանդավոր հայրիկի նկարչական ձիրքը:

Հայրենիքին մատուցած վաստակի համար Վարուժան Հեճինյանն արժանացել է բազմաթիվ մրցանակների, պարգևատրվել ՀՀ սփյուռքի նախարարության «Արշիլ Գորկի» շքանշանով, ՀՀ ազգային ժողովի ոսկե մեդալով, Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե հուշամեդալով, ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից՝ երախտագիտության մեդալով և «Մովսես Խորենացի» շքանշաններով, ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալներով, ինչպես նաև նրան շնորհվել է ՀՀ նկարիչների միության պատվավոր անդամի կոչում:

Նկարչի արվեստում իր ուրույն տեղն է զբաղեցնում 2014 թ. կերտած «Մոր ձեռքերը» խաչքարը (նկ. 18)՝ ստեղծված գրանիտի և բրոնզի համադրությամբ: Խաչքարից դուրս եկող «մոր ձեռքերն» ասես հյուսում են հայ ժողովրդի ճակատագիրն ու պատմությունը: Ինչպես Արշիլ Գորկու «Նկարիչը և նրա մայրը» կտավում հորինվածքի մեջ աչքի են ընկնում նկարչի մոր ձեռքերը, այս խաչքարում ևս կոմպոզիցիոն առանցքը Վարուժան Հեճինեան արվեստագետի մոր ձեռքերն է: Խաչքարը տեղադրված է Մասաչուսեթս նահանգի Լոուել քաղաքի քաղաքապետարանի դիմաց: Այս աշխատանքում նկարիչը ներդրել է իր հոգին, իր հույզերն ու ապրումները, այն ցավը, որի միջով անցել են իր ժողովուրդն ու ծնողները:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի 2017 թ. վրձնած մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի դիմանկարը (նկ. 19), որը նկարիչը նվիրեց Հայաստանում Նանսենի

[1] Տե՛ս "Religious Murals", http://www.varoujan.net/religious_collection.html
[2] Տե՛ս "Exhibitions-Armenia", http://www.varoujan.net/armenia_exhibit.html

անունը կրող կազմակերպությանը: Ի դեպ, նկարի տպագրված կրկնօրինակը Վարուժանը նվիրեց ԵՊՀ-ի Ֆրիտյոֆ Նանսենի անվան լսարանին: Այս դիմանկարը հավաքական կերպար է բարերարի, մարդասերի և վերջապես մի մարդու, որն իր ներդրումն է ունեցել մեր ժողովրդի աջակցման գործում: Նանսենի ձեռքերի մեջ պատկերված է կնոջ գլուխ՝ հայ ժողովրդին խորհրդանշող, որը կապված է Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցուն: Այսպես է զգացել ու պատկերել մեծ մարդասերին նկարիչը:

Վարուժանի խոսքով՝ յուրաքանչյուր նկարչի ստեղծագործության մեջ կա հենց ինքը՝ նկարիչը: Եվ դա իրոք այդպես է: Նրա արվեստը համամարդկային է, որի հիմքում ընկած է ՍԵՐԸ. սերը հայրենիքի, կնոջ, մարդկանց, բնության և տիեզերքի հանդեպ: Նա գովերգում է գեղեցիկը: Գեղեցիկը չափանիշ է, որ ամեն անհատի մոտ տարբեր ձևով է արտահայտվում: Ըստ նրա՝ գեղեցիկի հասկացողությունը այն վիճակն է, որտեղ ոչինչ չես կարող ավելացնել ու ոչինչ չես կարող պակասեցնել, այն նկարն է, որից աչքդ չես ուզում հեռացնել: «Երբ իմ նկարած աշխատանքը հասնում է մի այնպիսի ստեղծագործական փուլի, երբ ես ներքնապես զգում եմ, որ եթե մի վրձնահարված էլ ավելացնեմ նկարը տուժելու է, ուրեմն դա գեղեցիկ է: Այն կնոջ հետ, երբ կարողանում եմ երկար զրուցել ու չզգալ ժամանակի սահքը, ուրեմն նա գեղեցիկ է: Եթե մի գիրք եմ սկսում կարդալ ու մինչև վերջին էջը հասնել, ուրեմն դա գեղեցիկ է գրված ու այսպիսի շարունակական համեմատություններ: Բայց նաև կա գեղեցիկի մեկ այլ չափանիշ, որն անսահման է, որը համեմատում ես քո մեջ եղած կատարյալի՝ քո իդեալի հետ»,-խոստովանում է նկարիչը[1]: Նրա աշխատանքները ստեղծվում են ռոմանտիզմի ոգով: Նա ստեղծագործություններին փոխանցում է այն բոլոր հույզերն ու ապրումները, ինչը զգում է նկարները կերտելիս: Այն հարցին, թե արդյոք ունի սիրելի նկարիչներ, Վարուժանը պատասխանեց. «Կարող եմ ասել՝ ունեմ սիրելի ստեղծագործություններ: Դրանք պայմանավորված են նրանով, թե որքան են հուզում իմ հոգին, ջերմացնում սիրտս ու ինձ տրամադրում դեպի հուսալի հաջորդ պահը: Մի խոսքով՝ նկարներ, որ դրական ազդեցություն են թողնում իմ ներաշխարհի վրա»[2]:

Վարուժանի կտավներից ճառագում է ջերմություն, լավատեսություն, սեր, խաղաղություն՝ շնորհիվ ներկապնակում գերիշխող վառ գույների: Սա է նրա էությունը: «Երբ ես նկարում եմ, միշտ ունենում եմ սիրելիիս կամ իդեալիս պատկերն իմ առաջ, և բոլոր նկարներս նրա շուրջն են պտտվում: Աստվածամորը, հայրենիքիս, թե բնության նվիրված նկարներին ես տալիս եմ իմ սիրո պատկերը, լինի դա պատվեր, թե ինքնաբուխ նկար, այն պիտի լինի անթերի և ներշնչված սիրով»,-ասում է նկարիչը: Սա է Դանիել Վարուժան Հեճինյան արվեստագետի տարերքը: Նա ապրում և առաջնորդվում է արվեստով:

Кристине Саргсян, История одной жизни. художник Даниель Варужан Эджинян. Армянское искусство всегда процветало во всех уголках мира благодаря знаменитым армянам. Таков сын семьи, переживший геноцид, художник Даниэль Варужан Эджинян из Бостона. Его искусство универсально, в основе которого любовь: к родине, женщине, людям, природе и вселенной. Работы художника можно разделить на серии, посвященные сирийскому народу, романтические произведения, церковные иконы, миру искусства, независимости родины, США и т.д. Работы Варужана включают элементы романтизма, экспрессионизма и сюрреализма. Он увлекался искусством Эжена Делакруа, Сальвадора Дали, Поля Сезанна и Пабло Пикассо, создавая свой собственный уникальный художественный язык и отличающийся почерк. Он рисует то, что чувствует, то что близко к его внутреннему миру.

[1] Հոդվածում բերված փաստերի և տեղեկությունների հիմնական մասը մենք քաղել ենք արվեստագետի հետ առանձնազրույցից:
[2] Ըստ մեր առանձնազրույցի:

Ключевые слова: художник, искусство, культура, геноцид, церковь, Фритьоф Нансен, родина, Диаспора, США, романтизм, икона.

Kristine Sargsyan, A story of a life: artist Daniel Varoujhan Hejinian. Armenian art has always been on the rise in the four corners of the world, thanks to its distinguished sons and daughters. Such is Boston-based artist Daniel Varoujan Hejinian, the son of a survivor of the Armenian genocide. His art is universal, the basis of which is love, love for his homeland, woman, people, nature and the universe. His works can be divided into series: romantic works of art, religious paintings, Peace of Art series, paintings dedicated to the people of Syria, paintings dedicated to the independence of homeland, as well as Colors of Liberty collection, dedicated to his adopted country the United States of America. There are elements of romanticism, expressionism, and surrealism in his works of art. He was impressed by art of Eugene Delacroix, Salvador Dali, Paul Sezan and Pablo Picasso, yet he created his own unique and distinguished signature style. He paints what he feels, what is close to his inner world.

Key words: painter, art, culture, genocide, church, Fridtjof Nansen, homeland, Diaspora, USA, romanticism, icon.

Նկ.1. Նկարիչը՝ Դանիել Վարուժան Հեճինյանը

Նկ. 2. «20 կախաղաններ»

Հայոց ցեղասպանությանը նվիրված վահանակներ ԱՄՆ-ում

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Որմնանկարներ, Սրբոց Վարդանանց Հայ Առաքելական Եկեղեցի
Չելմսֆորդ Մասաչուսեթս

Նկ. 6

Նկ. 7

Նկ. 8

Նկ. 9

Նկ. 10. Խաղաղության հրեշտակը, 2014
կտ., յուղ., 72×100

Նկ. 11. Անկախության քամին, 2014
կտ., յուղ., 76×100

Նկ. 12. Մեկ հայրենիք, երկու հանրապետություն, 2014
կտ., յուղ., 76×100

Նկ. 13. Հայաստան-Սփյուռք-Արցախ, 2014
կտ., յուղ., 76×100

Նկ. 14. Կապույտ վարդերի մեղեդին, 2005
կտ., յուղ., 108×121

Նկ. 15. Սիրո կերոն, 2005
կտ., յուղ., 72×100

Նկ. 16. Եռանկար «Դարի ոճիրը», 2014
կտ., յուղ.
մաս 1. Տեսիր ոչ չարիք, լսիր ոչ չարիք, 100x130
մաս 2. Ակն ընդ ակն, ատամն ընդ ատամ, 120x130
մաս 3. Թղթյա աղավնին, 100x130

Նկ. 17. Եռանկար «Ցեղասպանությունից անկախություն», 2014
կտ., յուղ.
մաս 1. 1988. Երկրաշարժ-100x130
մաս 2. Ազատ և անկախ Հայաստանը, 120x130
մաս 3. Ազատ և անկախ Արցախը, 100x130



Նկ. 18. Խաչքար-հուշարձան «Մոր ձեռքերը», 2014
ԱՄՆ Լոուել քաղաքի քաղաքապետարանի մուտքի առջև



Նկ. 19. «Խաղաղությունն ափերի մեջ. Ֆրիտյոֆ Նանսենի դիմանկարը», 2017
կտ., յուղ., 44×74